



ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

«16» 03 2009թ.

01/451519-10

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Վեհափառ Հայրապետ,

Հպարտությամբ եւ ուրախությամբ տեղեկացանք, որ Դուք արժանացած էք Հնդկաստանի Ուդդափառ Եկեղեցոյ բարձրագոյն պարզելին՝ «Սուրբ Թովմաս» շքանշանին:

Հպարտ ենք եւ ոգեշնչուած, որ ըստ արժանոյն գնահատուած է՝ պետական, միջեկեղեցական, միջկրօնական յարաբերութիւններուն նպատակաուղղուած Ձեր միջազգային գործունէութիւնը:


Հաւատքի, յոյսի եւ սիրոյ քրիստոնէական առաքինութիւններուն հաւատարիմ մնալու՝ Ձեր պատգամները մեր ազգային, հաւաքական եւ անհատական կեանքին նոր որակ կը հաղորդեն: Սփիւռքի մէջ հայ ինքնութեան պահպանութեան, ազգային որակներու նուազագոյն կորուստի, պատմական ճակատագրի եւ յիշողութեան, հայ տեսակի պահպանութեան համար Ձեր բոլոր ջանքերը անգնահատելի են եւ հիացմունքի արժանի:

Թո՛ղ Ձեր Աստուածահաճոյ գործերով ոգեշնչուած հայ ժողովուրդը նորանոր յաջողութիւններ արձանագրէ, դիմակայէ համաշխարհայնացման եւ ապակայունացման բոլոր մարտահրաւերները եւ առաւել նուիրումով կերտէ մեր ազգի ապագան, Մայր Հայրենիքի ապագան:

Ընդունեցէ՛ք մեր ջերմագին շնորհատրանքները, բարեմաղթութիւններն ու խոնարհումը:

Թո՛ղ Հայրենիքի եւ աշխարհասփիռ հայորդիներու զօրակցութիւնը պահպանէ Ձեր ստեղծագործելու եւ արարելու ուժն ու եռանդը:

ՄԱՏՉԻՄԻ ՀԱՄԲՈՅՐ ՍՈՒՐԲ ԱՋՈՅԴ
ԽՈՐԻՆ ԵՐԿԻՒՂԱԾՈՒԹԵԱՄԲ՝


ՀՐԱՆՈՒՑ ՅԱԿՈՒԹԵԱՆ

Համահայկական, միջազգային
եւ եկեղեցական կառոյցներու
հետ կապերու վարչութիւն
հեռ.՝ (010) 58-56-01 (1-15)